



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2020 թ.

ՀԱՍՄԻԿ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ  
(jasmine.asatryan@gmail.com)

Ի պատասխան Ձեր 25/05/2020թ. հարցման

Հարգելի Հ. Ասատրյան

2020 թվականի համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերին մասնակցելու համար Մեծ Պարնի համայնքը ներկայացրել է երկու հայտ՝ «Համայնքում արևային էլեկտրակայանով սնվող գիշերային լուսավորության համակարգի կառուցում» և «Համայնքի մշակույթի տան ամրացման և մարզադահլիճի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագրերով: Դրանց նախնական ընդհանուր բյուջեն կազմել է համապատասխանաբար 21.34 մլն և 40.36 մլն դրամ, որից համայնքային ներդրում՝ 8.54 մլն և 24.22 մլն դրամ: Երկրորդ ծրագիրն արդեն իսկ հաստատվել է ՀՀ վարչապետի 19.03.2019թ թիվ 278-Ա որոշմամբ ստեղծված՝ սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

Արևաշող համայնքը ներկայացրել է երեք հայտ՝ «Համայնքի «Յագիկ» թաղամասում մանկական խաղահրապարակի կառուցում», «Համայնքապետարանի տանիքին արևային ֆոտովոլտային կայանի և առաջին փողոցի 11-րդ նրբանցքի փողոցային լուսավորության ցանցի կառուցում» և «Համայնքի «Յագիկ» թաղամասի ճանապարհի հիմնանորոգում» ծրագրերով: Դրանց նախնական ընդհանուր բյուջեն կազմել է համապատասխանաբար 10.07 մլն, 11.56 մլն և 40.52 մլն դրամ, որից համայնքային ներդրում՝ 6.04 մլն, 5 մլն և 5.04 մլն դրամ: Առաջին ծրագիրն արդեն իսկ հաստատվել է վերոնշյալ հանձնաժողովի կողմից:

Հարթագյուղ համայնքը ներկայացրել է մեկ հայտ՝ «Համայնքի փողոցների կառուցման աշխատանքներ» ծրագրի համար: Վերջինիս նախնական ընդհանուր բյուջեն կազմել է 16.6 մլն դրամ, որից համայնքային ներդրում՝ 7.47 մլն դրամ:

Invalid signature

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հարգանքով՝

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

